ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2023թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սուրեն Գրիգորյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Սուրեն Գրիգորյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Սուրեն Գրիգորյանի կենսագրությունը

Ծնվել է 1992թ. հունիսի 24-ին:

2009. – 2013թթ. սովորել է Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2013 – 2015թթ. սովորել է Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2015 – 2018թթ.՝ Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտուրայում:

2014թ. աշխատել է «AM» իրավաբանական ընկերությունում՝ որպես իրավախորհրդատուի օգնական:

2014 – 2016թթ. եղել է «AM» իրավաբանական ընկերության իրավախորհրդատու:

2016 –2017թթ. եղել է «AM» իրավաբանական ընկերության ավագ իրավախորհրդատու:

2017 – 2018թթ. աշխատել է «Concern Dialog» իրավաբանական ընկերությունում՝ որպես իրավաբան:

2018 – 2019թթ. աշխատել է «Concern Dialog» իրավաբանական ընկերությունում՝ որպես ավագ իրավաբան:

2019 – 2021թթ. եղել է Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողովի «Իմ Քայլը» խմբակցության պատգամավոր, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

2021թ. ապրիլից մինչև 2021թ. դեկտեմբեր եղել է արդարադատության նախարարի տեղակալ:

2015 թվականից Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ է:

2018 թվականից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

2022թ. փետրվարի 8-ին Երևանի ավագանու նիստում նշանակվել է Երևանի քաղաքապետի տեղակալ:

Ամուսնացած է: